ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 12, 1950 *Общественные науки*

Հ. Վարդանյան

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՈՒՑԻԱՆ՝ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԱՏԱՐԱՐԸ

Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայի ծնունդն է։ Առանց Հոկտեմբերյան ռևոլուցիայի, Անդրկովկասի աշխատավորները չէին ազատագրվի դաշնակների, մենշևիկների ու մուսավաթականների արյունոտ տիրապետությունից։ «Սովետական իշխանության գոյությամբ,— գրում էր Սերգո Օրջոնիկիձեն,— Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի աշխատավոր մասսաներն իրենց ազատագրության համար ամբողջապես պարտական են Ռուսաստանին։ Չլիներ Սովետական Ռուսաստանը— չէր լինի Սովետական Ադրբեջանը, Սովետական Վրաստանը, Սովետական Հայաստանը»։[1]

Սովետական իշխանությունը հայ ժողովրդին տվեց ոչ միայն ազգային վերածննդի հնարավորություն, այլև՝ խաղաղություն, որից նա զուրկ էր առաջ։

Ցարիզմն ու նրան փոխարինելու եկած բուրժուական ժամանակավոր իմպերիալիստական կառավարությունը ազգային հարցը լուծում էին մտրակի ուժով, բանտերով ու կախաղաններով։ Հայ ժողովրդի ոխերիմ թշնամիները՝ դաշնակները ազգային հարցը լուծում էին արյունով ու մահով։ «Ռուսական ցարը,— ասում է ընկեր Միկոյանը,— ազգային հարցը լուծում էր մտրակով, բանտով, կախաղանով։ Դաշնակները՝ հայ ժողովրդի այդ ամենաոխերիմ թշնամիները, ազգային պրոբլեմը լուծում էին արյունով ու մահով։ Նրանք իրենց իշխանության երկու տարվա ընթացքում երկու պատերազմ կազմակերպեցին։ Դաշնակների ժամանակ ազգային քաղաքականությունը,— դա մի ժողովուրդ մյուսի դեմ գազանաբար գրգռելն էր։ Ահա թե ինչու Հայաստանը դաշնակների ժամանակ որբերի երկիր էր, արյունքի երկիր, աղքատության ու վայրենի կամայականության երկիր»։[2]

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիան ազատագրեց հայ ժողովրդին դաշնակցական տեռորիստական ռեժիմից և հայ ժողովրդին տվեց ազգային վերածննդի հնարավորություն, ապահովեց նրա տնտեսության, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի, գիտության ու արվեստի զարգացման հնարավորությունը։

Իր 30-ամյա գոյության ընթացքում հայ ժողովուրդը, Սովետական Միության մյուս ժողովուրդների հետ, բարեկամական ընտանիքում կառուցեց սոցիալիզմը և բոլշևիկների պարտիայի ղեկավարությամբ հաղթական քայլերով առաջ է գնում կոմունիզմի կառուցման ուղիով։

---

[1] Ս. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 92։

[2] Ա. Ի. Միկոյանի ճառը, Երևանի Սասայինյան ընտրական օկրուգի ընտրողների ժողովում, էջ 10, Երևան, 1939 թ.։

Հոկտեմբերյան ռևոլուցիան ձեղքեց համաշխարհային իմպերիալիզմի ճակատը, խախտեց նրա միասնությունը և իշխանության գլուխ կանգնեցրեց պրոլետարիատին՝ աշխարհի խոշորագույն տերություններից մեկում։ Պատմության մեջ առաջին անգամ ամենաճնշված ու շահագործվող բանվոր դասակարգը բարձրացավ իշխող դասակարգի դրության։ «Այս նշանակում է,— գրում էր ընկեր Ստալինը,— որ Հոկտեմբերյան ռևոլուցիան բաց արեց իմպերիալիզմի երկրներում նոր դարաշրջան, պրոլետարական ռևոլուցիաների դարաշրջանը»։[1]

Հոկտեմբերյան ռևոլուցիան արթնացրեց գաղութային ժողովուրդներին և պայքարի հանեց իմպերիալիզմի լծի դեմ՝ իրենց ազատագրության համար։ Հոկտեմբերյան ռևոլուցիան ազատագրեց ցարական Ռուսաստանի ճնշված և իրավազուրկ ազգություններին ու ժողովուրդներին, այդ թվում նաև հայ ժողովրդին, մոտեցրեց միմյանց և պայմաններ ստեղծեց նրանց փոխադարձ համագործակցության ու բարեկամության համար, մարդկության պատմության մեջ առաջին անգամ հնչված ազգությունները ստրկական վիճակից բարձրացան մինչև ազատ ու իրավահավասար դրություն։ Նա ստեղծեց նոր, սոցիալիստական ազգեր, որոնք իրենց նպատակասլացությամբ ու բարոյա-քաղաքական կերպարով արմատապես տարբերվում են բուրժուական ազգերից։ Նախկին ցարական գաղութների հնչված ազգությունների ազատագրումը հաստատ հավատ ներշնչեց աշխարհի գաղութային ժողովուրդներին՝ իրենց մոտակա ազատագրման համար, նրանց ոտքի հանեց իմպերիալիզմի դեմ։ «Այս նշանակում է,— գրում էր ընկեր Ստալինը,— որ Հոկտեմբերյան ռևոլուցիան նոր դարաշրջան է բաց արել, դարաշրջան գաղութային ռևոլուցիաների, որոնք կենսագործվում են աշխարհի հնչված երկրներում պրոլետարիատի հետ դաշնակցած, պրոլետարիատի ղեկավարությամբ»։[2]

* * *

Կոնտրռևոլուցիոն դաշնակների պարտիան, որն իմպերիալիստների ավիների օգնությամբ իր արյունոտ տիրապետությունը հաստատեց Հայաստանում 1918—1920 թվականներին, վրացական մենշևիկների և ադրբեջանական մուսավաթականների հետ միասին պայքարի հանվեց Հոկտեմբերյան ռևոլուցիայի դեմ, հայ ժողովրդի ազատարարի դեմ։ Եվ գա հասկանալի էր։ Հոկտեմբերյան ռևոլուցիան «...մեկ շարժումով տակնուվրա արեց բոլոր հարաբերությունները, դնելով իշխանությունն աշխատավոր դասակարգերի ձեռքն անցնելու հարցը։ «Ամբողջ իշխանությունը բանվորներին և գյուղացիներին» կանչը որոտալից տարածվեց ամբողջ երկրով մեկ, ոտքի հանելով ճնշված մասսաներին»։

Հայաստանի բոլշևիկները ոգեշնչված Ռուսաստանում հաղթանակած Հոկտեմբերյան ռևոլուցիայով, Լենինի և ընկեր Ստալինի ցուցումներով, կազմակերպում ու դաստիարակում էին Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին՝ դաշնակների տիրապետությունը տապալելու և Հայաստանում սովետա-

1 Ի. Վ. Ստալին. Լենինիզմի հարցերը, էջ 221, Երևան, 1940 թ.։
2 Նույն տեղում, էջ 223։
3 Ստալին. Երկեր, հատ. 4, էջ 60։

կան կարգեր հաստատելու համար։ Դաշնակցական խմբապետների տեռորի ռեժիմի վրա հիմնված Հայաստանը, որը կախման մեջ էր Անտանտի իմպերիալիստական տերությունների և քմահաճույքներից և հանդիսանում էր նրանց գործակալը, Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և Հայաստանի բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն շարժումների դեմ կռվելու համար։ Դաշնակցական կառավարության թե՛ ներքին և թե՛ արտաքին քաղաքականությունը բխում էր իմպերիալիստների շահերից և ուղղված էր հայ ժողովրդի շահերի դեմ։ Դաշնակները հայ ժողովրդի դարավոր թշնամիների՝ թուրքական զավթիչների հետ բանակցություն էին վարում Անդրկովկասում առաջին Սովետական իշխանության դրոշը պարզած Բաքվի հերոսական Կոմունան ճնշելու համար։ Նրանք Թյուրքիայից օգնություն էին խնդրում «կարգ ու հանգստություն երկրում ապահովելու համար»,՝ այսինքն՝ բոլշևիկների ղեկավարած բանվորների և գյուղացիների ռևոլյուցիոն շարժումները ճնշելու համար։

Դաշնակցական կառավարության հետ միասին Հոկտեմբերյան ռևոլյուցիայի, հետևապես և հայ ժողովրդի ազատության դեմ էին պայքարում նաև սպեցիֆիկները, որոնք արտահայտեցին իրենց սկզբունքային թշնամությունը Սովետական պետական կարգերի նկատմամբ։ 1920 թվականի սկզբին կազմակերպելով այսպես կոչված «Հայաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիա», սպեցիֆիկներն իրենց բաց թողած «Պարտիական տակտիկա» բրոշյուրում գրում էին. «Մեր պարտիայի վերաբերմունքը դեպի «Սովետական իշխանությունը»— բացարձակապես բացասական է։»

1918—1920 թ. թ. պետական իշխանության գլուխ կանգնելով՝ դաշնակցականները և նրանց հետ ձեռք ձեռքի տված սպեցիֆիկներն ու նացիոնալիստական, կոնտրռևոլյուցիոն պարտիաները, Կոլչակի, Դենիկինի, Վրանգելի զինակիցներն էին Հոկտեմբերյան ռևոլյուցիայի դեմ կռվելու գործում, Հոկտեմբերյան ռևոլյուցիայի, որը Ռուսաստանի կենտրոնից արագորեն տարածվում էր դեպի ծայրամասերը, դեպի Անդրկովկաս, ամրապնդում ծայրամասերի բանվորների և գյուղացիների դաշինքը Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հետ՝ ոգեշնչելով նրանց սոցիալիզմի հաղթանակի հավատով։ Այլ կերպ էլ լինել չէր կարող։ «Պրոլետարական Ռուսաստանի և իմպերիալիստական Անտանտայի միջև բորբոքվող մահացու պայքարի պայմաններում ծայրամասերի համար,— գրում էր Ընկեր Ստալինը,— հնարավոր է միայն երկու ելք.

Կա՛մ Ռուսաստանի հետ միասին, և այն ժամանակ— ծայրամասերի աշխատավոր մասսաների ազատագրումն իմպերիալիստական ճնշումից.

Կա՛մ Անտանտայի հետ միասին, և այն ժամանակ— անխուսափելի իմպերիալիստական լուծ։

Երրորդ ելք չկա։ Այսպես կոչված անկախ Վրաստանի, Հայաստանի, Լեհաստանի. Ֆինլանդիայի և մյուսների այսպես կոչված անկախությունը լոկ մի խաբուսիկ երևութականություն է, որը քողարկում է այդ, թող ներվի ասել, պետությունների կատարյալ կախումը իմպերիալիստների այս կամ այն խմբից»։[3]

---

[1] ՀՍՍՌ Գլխավոր կենտրոնական Արխիվ, ֆ. 200, գ. 11, թ. 97։
[2] ՀԿ(բ)Կ ԿԿ-ին կից Գարտարխիվ, ֆ 42, գ. 3, թ. 20։
[3] Ի. Վ. Ստալին, Երկեր, հատ. 4, էջ 291։

Անգլիական իմպերիալիստներն իրենց հովանավորության տակ էին վերցրել Հայաստանի տնտեսական ու քաղաքական կյանքի ամբողջ ղեկավարությունը։ 1919 թ. մարտի 29-ին Անդրկովկասի բրիտանական զորքերի հրամանատարի՝ դաշնակցական կառավարության արտաքին գործերի նախարարին ուղղված ծածկագրում ասված է.

«Անդրկովկասի Բրիտանական զորքերի հրամանատար գեներալը տեղեկանում է վստահելի աղբյուրից, որ մի բոլշևիկյան կոմիտե է հաստատվել Ալեքսանդրապոլում, և որոշ ժամանակից ի վեր, շատ ակտիվ պրոպագանդա է տանում բանվորական դասակարգի և երկաթուղային ծառայողների մեջ։

Այս հարցն արդեն հանձնված է Ալեքսանդրապոլի Հայկական ոստիկանության ուշադրությանը, որը իր հերթին տեղեկացրել է Հայկական կառավարությանը խնդրի առկա եղող կոմիտեի գոյության մասին....

Հրամանատար գեներալն ուրախ պիտի լինի, եթե Ձերդ վսեմությունը հիմա անմիջական քայլեր անի՝ ճնշելու վերև հիշատակված բոլշևիկյան կոմիտեն։

Թելադրվում է նաև, որ այս կոմիտեի ղեկավարները պատշաճ կերպով պատժվեն»։[1]

Այս փաստն ակնառու կերպով ցույց է տալիս այն, թե ինչպես հայ ժողովրդի այդ թշնամիները Հայաստանը ենթարկել էին անգլիական դիշատիչ իմպերիալիստների քմահաճույքին և նրանց օգնությամբ ու թելադրանքով կռվում էին Հայաստանում սովետական իշխանության հաստատման դեմ։ Դաշնակցական կառավարությունը սովետական ժողովուրդների ոխերիմ թշնամի Ջերջիլլի գլխավորած 14 իմպերիալիստական տերությունների թվումն էր։ Դաշնակներն իրենց այդ կոնտրռևոլուցիոն նպատակների կենսագործման համար Դենիկինից ստացան 3.000.000 փամփուշտ և ռազմական այլ տեսակի հանդերձանք։[2]

Անդրկովկասի բոլշևիկները եռանդուն պայքար էին մղում դաշնակների, մուսավաթականների և մենշևիկների կոնտրռևոլուցիոն կառավարությունների դեմ, որոնք հանդիսանում էին իմպերիալիստների ու սպիտակգվարդիականների զինակիցները՝ Սովետական Ռուսաստանի և իրենց երկրների բանվորների ու գյուղացիների դեմ մղվող պայքարում։ 1919 թվականի դեկտեմբերի 10-ին հրապարակվեց Դենիկինի դեմ ռևոլուցիոն ուժերի միասնական ճակատ ստեղծելու անհրաժեշտության մասին ՌԿ(բ)Պ Կովկասյան Կոմիտեի կոչը՝ ուղղված Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի բանվորներին, գյուղացիներին և զինվորներին։ Այդ կոչում ասված է.

«Անդրկովկասի «դեմոկրատական» կառավարությունները հաջողությամբ են մրցում ցարական գեներալների—Դենիկինի, Վրանգելի և Պոկրովսկու հետ, իրենց երկրում ռևոլուցիոն շարժումները ճնշելու գործում։

... Դենիկինի կործանումն Անդրկովկասյան կառավարությունների տնկման սկիզբն է միայն և բանվորա-գյուղացիական իշխանության հաղթանակի երաշխիքը Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում։

... Մենք պետք է միասնական կարմիր ճակատ ստեղծենք Սև ծովից մինչև Կասպից ծովը՝ մեր գլխին սուր բարձրացրած թշնամու դեմ։ Ով խաղաղու-

[1] ՀՍՍՌ ՊԿԱ, ֆ. 199, գ. 12, թ. 79։
[2] Նույն տեղում, ֆ. 206, գ. 253, թ. 190։

թյան ձեռք կմեկնի Դենիկինին, նա անդրկովկասյան ժողովուրդների ինքնորոշման թշնամին է։ Կեցցե՛ պատերազմը Դենիկինի դեմ»։[1]

Ներկացնելով ու բացահայտելով Անդրկովկասի կոնտրռևոլուցիոն կառավարությունների դաշինքն ինտերվենտների և սպիտակգվարդիականների հետ, ցույց տալով, որ այդ դաշինքն ուղղված է իրենց բանվորների ու գյուղացիների դեմ, ՌԿ(բ)Պ Կովկասյան Կոմիտեն 1920 թվականի հունվարին հրապարակած իր կոչում՝ ուղղված Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի աշխատավոր մասսաներին, ասում էր.

«Անդրկովկասյան ռեսպուբլիկաների դավաճան կառավարություններն ամենախայտառակ դաշինք կնքեցին անգլո-ֆրանսիական իմպերիալիստների հետ։

...Մենք, Անդրկովկասի բանվորներս ու գյուղացիներս, սերտորեն միացած Կարմիր Բանակի հետ, պրոլետարական դաշինքը հակադրեցինք ձեր իմպերիալիստական դաշինքին։ Մենք կպատերազմենք ոչ թե բոլշևիկների, այլ ձեր դեմ, մեր դավաճանների դեմ։ Վրաց ազնվականության, ադրբեջանական խանության, հայկական բուրժուազիայի ձեր դեղին կոնտրռևոլուցիոն դաշինքին մենք հակադրել ենք Վրաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի բանվորների, գյուղացիների ու զինվորների ռևոլուցիոն դաշինքը, կարմիր եղբայրությունը...։

Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հետ միասին, մենք մեզ մոտ և ամբողջ աշխարհում կստեղծենք պրոլետարական իշխանություն և ընդմիշտ կբարձրացնենք կոմունիզմի կարմիր դրոշը։

Կորչի մենշևիկյան-դաշնակցական և մուսավաթական դաշինքը»։[2]

Լինելով Սովետական Ռուսաստանի կատաղի թշնամիները, դաշնակցականները, սպեցիֆիկները և նացիոնալիստական մյուս թափթփուկները հույս էին դրել Ամերիկայի վրա, նրանից էին սպասում «Հայկական հարցի» լուծումը, սպասում էին, որ Վիլսոնը և նրա «դեմոկրատական» պարտիան իրենց վրա կվերցնեն հայկական հարցի լուծումը։

Ահարոնյանը պահանջում էր, որ իր կառավարությունն ավելի լավ կազմակերպի կռիվը բոլշևիկների դեմ, որպեսզի չկորցնի իր վստահությունը Անգլիայի աչքում։ Նա գրում էր. «Կտրված լինելով ձեզանից և անծանոթ այդ տեղի նոր անցուդարձին, ես ենթադրում եմ, որ անգլիական կառավարությունը հույսը կորցրել է, թե կովկասյան ժողովուրդները և մասնավորապես հայերը բոլշևիկների դեմ կերթան և այս պատճառով անօգուտ է համարում մեզ դենք տալ...»։[3]

Դաշնակցական կառավարության աչքին թոզ փչելու նպատակով, Անտանտի իմպերիալիստները Սևրի դաշնագրի մի հոդվածի տակ տեղավորեցին «Միացյալ և անկախ Հայաստանի հարցը», և ճանաչեցին այն որպես մի թղթի կտոր և հույսերով ոգեշնչեցին դաշնակ մաուզերիստներին։ Բայց հենց այդ օրերին էր, որ թուրքական օկուպանտները զավթել էին Հայաստանի տերիտորիաները, կողոպտում, այրում ու ոչնչացնում էին Հայաստանի գյուղերն

---

1 Գ. Վ. Խաչապուրիձե, Պայքար պրոլետարական հեղափոխության համար Վրաստանում (էջ 410—412), մեր թարգմանությամբ։

2 Նույն տեղում, էջ 413—414։

3 ՀՍՍՌ ՊԿ Արխիվ, ֆ. 200, գ. 317, թ. 124։

ու քաղաքները, կոտորում հայ ազգաբնակչությանը՝ Անտանտի իմպերիալիստական տերությունների աչքի առջև։ Իսկ դաշնակցական բախտախնդիրները հարկ եղած դեպքում դաշնակցում էին թուրքերի հետ՝ Հոկտեմբերյան ռևոլուցիայի դեմ, հայ ժողովրդի ազատության ու անկախության համար պայքարող բոլշևիկների դեմ։ Այսօր էլ դաշնակցական բանդաները ծառայության մեջ են անգլո-ամերիկյան իմպերիալիստների, ինչպես նաև թուրքական վանդա ների մոտ՝ ժողովրդա-դեմոկրատական երկրների և Սովետական Միության դեմ կռվելու համար։

* * *

Դաշնակների տիրապետության օրոք անասելի կերպով ծանր էր Հայաստանի վիճակը։ Ազգամիջյան կռիվների հետևանքով Հայաստանի անդամահատումը մի կողմից, արտաքին քաղաքականության մեջ ավանտյուրիզմը հայ ժողովրդին կանգնեցրել էին տնտեսական կատաստրոֆի ու ֆիզիկական ոչնչացման առջև։ Հայաստանը վեր էր ածվել որբանոցների երկրի, աղքատության, սովի ու համաճարակային հիվանդությունների երկրի։ Կամայականություն, մարդկային ամեն մի արժանապատվության ոտնահարում, բռնություն, թալան և մարդասպանություն,— այս էր դաշնակցական «անկախ» Հայաստանի պետականության բարոյա-քաղաքական կերպարանքը։

Դաշնակների արյունոտ տիրապետության օրոք Հայաստանի ժողովրդական տնտեսության խղճուկ վիճակի մասին գաղափար կազմելու համար բավական է հիշատակել մի քանի թվական տվյալներ։ Արդյունաբերության արտադրանքը (1926 թ. գներով հաշված), 1913 թվին կազմում էր 20.700 հազար ռուբլի, իսկ 1919 թվին՝ 1.700 հազար ռուբլի։ Գյուղատնտեսության արտադրանքը 1913 թվին եղել է 65.800 հազար ռուբլի, իսկ 1919 թվին՝ 11.300 հազար ռուբլի։ Եթե 1913 թվին արդյունաբերության արտադրանքը ժողովրդական տնտեսության 23,9 տոկոսն էր կազմում, ապա 1919 թվին՝ 13,1 տոկոսը։

Ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղերի անկումն անասելի նյութական ծանր զրկանքների առջև կանգնեցրեց ազգաբնակչությանը։ Դրժբախտ հայ աշխատավորները թալանվում ու կողոպտվում էին խմբապետ-մուզերիստների, դաշնակ-պրիստավների և կառավարողների կողմից, որոնց արարքներն է՛լ ավելի էին բորբոքում մասսաների խոր ատելությունը դեպի դաշնակցությունն ու նացիոնալիստական մյուս հոսանքները։ Հարկ ենք համարում բերել մի քանի փաստ, որոնք բնորոշում են դաշնակցական Հայաստանի պատկերը։

Շահրիզ, Ծաղկունք և Դդմաշեն գյուղերի բնակիչները իրենց դիմումի մեջ, ուղղված վարչապետին, գրում են.

«Պարոն նախագահ, որանով դիմում ենք ձեզ և աղերսում ենք ուղարկել մեր շրջանը ձեր հատուկ ներկայացուցիչներից մեկին գյուղերում քննելու մեր դաժան դրությունը։

Մեր շրջանում այժմ տիրում է անարխիա շնորհիվ նոր նշանակված կոմիսար Գարեգին Թայիրյանի, և այդ է, որ մեր հայ կառավարությունը նշանակում է կոմիսարի պաշտոնի անհամապատասխան մարդկանց, որոնք ֆ՝՝ բում. փրբում են ժողովրդին։

Արդյոք... կառավարությունը քննե՞լ է և արժանի՞ է տեսել կոմիսարի պաշտոնի, թե՞ մեզ պատիժ է ուղարկված։ Խեղճ Հայաստան, ո՞վ է լուսավորիչդ։ Այդ Գարեգինը կանոնավոր մաուզերիստ է։ Նա գյուղիս ընտրված կոմիսարին փոխելով նշանակում է իր ցանկացածներին, անբարոյական մարդկանց, օգտվելով նրանցից։ Ամեն գյուղից վերցնում է ձրի կերպով երեքական արաբա խոտ։ Միլիցիոներներն անկարգ կերպով թալանում են գյուղերը...

Ո՞ւր փախչի գյուղացին։ Միլիցիային յուղի տեղը պանիր տվիր, բանդ վերջացավ. կամ արաբադ պետք է գնա պատվոդ, եթե այդ չունես, վրայիդ շալվարը կազյոնի է...

Նաև 23-ին օգոստոսի պարոն Գարեգինը Շահրիզ գյուղի իրեն նշանակած նոր կոմիսարի հետ, որ իրեն պես ավազակներից մեկն է, Հարուր Վարդանյանի հետ, թալանեց ճանապարհ գնացող թուրքերից 23 եզ և կով և ահագին ոչխարներ միասին. 5 արաբա խալիչաներ և պղնձե ամաններ, տեղաշոբեր։ Թալանելուց հետո, 24 կին և երեխաների գիշերով կոտորեցին. իհարկե այդ բոլորին մասնակցում էին միլիցիոներները՝ Լյուդվիգը և Տեղամը, Երևանի փոստից փախած Հայկը, որոնք Սրգակլու գյուղացի են։ Մշտական այդ երեքը շրջում են բոլոր գյուղերը, բռնում են գյուղացիներին, թե երեք և չորս հարյուր ռուբլի տուր, եթե չտաս, քեզ կտանենք սալդաթ. ով որ ուզում է լինի, նրանք բռնում են և թալանում։ 1919 թ. 13—սեպտեմբերի»։

Այս փաստը եզակի չէ։ 1920 թվի փետրվարին Ալեքսանդրապոլի հասարակությունը դաշնակցական կառավարության ներքին գործոց մինիստրին է ներկայացնում համախոսական-բողոք, որը բացահայտում է դաշնակցական ջոջերի զազրելի պատկերը։

«Շատ երկար մտածելուց հետո վերջապես վճռեցինք դիմել Ձեզ, և հայտնել մեր սարսափելի դրությունը։ Այն օրվանից, երբ դուք ուղարկեցիք տեղս Ձեր պարոն Վալադյանին, որը իր զինված մարդկանցով պատուհաս է դառել մեր գլխին— ահա երեք ամիս է։ Այն կալանքները, սոսկալի ծեծ ու քաշը, մարդկանց վախեցումը, չենք մոռանում մենք երբեք....

Մենք մի քանի հոգի ժողովրդի կողմից ընտրվեցինք և պետք է գայինք Ձեզ մոտ գանգատի։ Բայց մի քանի տողերք զգուշացրին, որ կսպանեն մեզ. մենք ահա գրում ենք ու խնդրում ենք այս մարդուց ազատեք մեզ... էլ հալ չմնաց մեր վրա։ Մենք շատ ենք խնդրում այս թուղթը պահեք գաղտնի, թե չէ մեզ վատ կլինի»[1] (ստորագրություններ 26 հոգու)։

Հայ աշխատավորները գտնվում էին միանգամայն անապահով վիճակում։ 1918—1920 թվականներին սովից մեռնողների թիվը հասնում էր 130.000-ի։ Հայ ժողովուրդը իր փրկությունը տեսնում էր միայն դաշնակների տիրապետության տապալման և սովետական կարգերի հաստատման մեջ։ Մասսաների ցասումն աճում էր օրըստօրե։ Բոլշևիկները ղեկավարում էին մասսաների պայքարը՝ հանուն սովետական կարգերի հաղթանակի։

* * *

Զինված Լենինի-Ստալինի ամենազոր ուսմունքով, ոգեշնչված իրենց դարավոր բարեկամ ռուս մեծ ժողովրդի հաղթանակներով ու Հոկտեմբերյան

[1] ՀՍՍՌ ԳԿ Արխիվ, ֆ. 69/201, գ. 1763, թ. 43։

ռևոլուցիայի ազատարար ազդեցությամբ, ինչպես նաև 1920 թվականի ապրիլի 28-ին եղբայրական Ադրբեջանի բանվորների և գյուղացիների նվաճած հաղթանակով, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները 1920 թվականի մայիսին, բոլշևիկների կարտիայի ղեկավարությամբ, ապստամբության դրոշ բարձրացրին դաշնակների աբյունոտ տիրապետության դեմ։

1920 թվի մայիսի 1-ին Հայաստանի բանվորները և աշխատավորական մասսաները, զինվորները, բոլշևիկյան գրոշի ներքո մասսայական ռևոլուցիոն ցույցեր կազմակերպեցին Երևանում, Ալեքսանդրապոլում, Նոր-Բայազետում, Ղարաքիլիսայում, Իջևանում և այլ վայրերում։ Ցուցարարները շարժվում էին բոլշևիկների մարտական լոզունգների ներքո՝ «Մուսավաթական Բաքուն ընկավ, հերթը դաշնակցական Երևանինն է, «Կեցցե՞ Սովետական Հայաստան», «Կեցցե՞ Սովետական Ռուսաստան», «Կեցցե՞ Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների իշխանությունը» և այլն։ Մասսաների զայրույթը հասել էր ծայր աստիճանի։ Ապստամբության հարցը ծառացավ բոլշևիկյան կազմակերպությունների առջև, որպես անհրաժեշտություն, որպես միակ միջոց՝ երկրում ստեղծված քաղաքական ճգնաժամը լուծելու համար։ Մայիսյան հերոսական ապստամբության գլուխ կանգնած Արմենկոմը մայիսի 1-ին Հայաստանի բոլշևիկների, բանվորների և գյուղացիների անունից ողջույնի հեռագիր ուղարկեց Սովետական Ադրբեջանի Ռևկոմին։

1920 թվի մայիսի 2-ին, ապստամբության ժամանակ, Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կազմակերպությունն իր դրոշի շուրջն էր համախմբել բանվորների, ծառայողների արհեստակցական միությունները, դյուղացիական աշխատավորությանը և հսկայական ազդեցություն էր ձեռք բերել դաշնակցական բանակում։ Զինվորներն իրենց ներկայացուցիչներն ուղարկեցին Մուսայելյանի «Վարդան զորավար» զրահապատ գնացքը, հայտարարելով, որ իրենք անցնում են ռևոլուցիայի կողմը։ Մայիսի 3-ին երկաթուղային կայարանը, բերդը, Մուսայելյանի զրահապատ գնացքի գլխավորությամբ կանգնեց բոլշևիկյան դրոշի ներքո։ Ալեքսանդրապոլի բոլշևիկները գեռ վաղուց էին նախապատրաստում դաշնակների տիրապետության տապալումը և Հայաստանում սովետական իշխանության հաստատումը։ Հայաստանի բոլշևիկների կոնֆերանսը նույնպես բանաձև ընդունեց ապստամբելու համար՝ հակառակ Արմենկոմում խցկված մի շարք դավաճանների, որոնք դեմ էին ապստամբությանը և քարոզում էին «դաշնակցական Հայաստանը խաղաղ ճանապարհով սոցիալիզմի մեջ ներաճելու» օպորտունիստական թեորիան։ Այդ դավաճանները փաստորեն դեմ էին դաշնակների տիրապետության տապալմանը և Հայաստանում սովետական կարգերի հաստատմանը։

1920 թվի մայիսի 6-ին կոմպարտիայի Ալեքսանդրապոլի Քաղաքային Կոմիտեն ընտրեց Ռազմա-ռևոլուցիոն կոմիտե և որոշեց քաղաքում իշխանությունը գրավել մայիսի 8-ին, հակառակ մի շարք օպորտունիստական տարրերի դիմադրությանն ու ցանկությանը։ Նույն օրն էլ դաշնակցական կառավարությունը կազմակերպեց արտակարգ դատարաններ՝ մահվան պատժի լայն իրավունքներով։ Մայիսի 7-ին դաշնակները Երևանում կազմակերպեցին մասսայական ձերբակալություններ։

1920 թվի մայիսի 10-ին, Ալեքսանդրապոլում բոլշևիկների ղեկավարությամբ սկսվեց զինված ապստամբություն և իշխանությունը անցավ ապս-

տամքների ձեռքը։ Ռազմա-հեղափոխական կոմիտեն հատուկ դեկլարացիայով Հայաստանը հայտարարեց սովետական և հեռագրով հրահանգեց Ղարսի և Սարիղամիշի բոլշևիկյան կոմիտեներին անհապաղ ապստամբություն սկսելու։ Ղարսում ապստամբությունն սկսվում է մայիսի 10-ին՝ Ղ. Ղուկասյանի ղեկավարությամբ։ Մայիսի 11-ին Ղարսում և Սարիղամիշում իշխանությունն անցնում է ապստամբների ձեռքը։ Մայիսի 13-ին ապստամբություն սկսվեց Նոր-Բայազետում՝ Հ. Սարուխանյանի գլխավորությամբ։ Իջևանում ապստամբությունն սկսվեց մայիսի 15-ին։

Կովկասյան Ռազմահեղափոխական կոմիտեի նախագահ Ս. Օրջոնիկիձեի կարգադրությամբ մայիսի 17-ին Ղազախի շրջանում գտնվող 32-րդ դիվիզիայի երկու հեծելագնդերը հրաման ստացան անցնելու սահմանը և օգնության ձեռք մեկնելու ապստամբներին, որը ոգևորեց Դիլիջանի բոլշևիկներին, որոնք վճռեցին գրավել իշխանությունը։ Մայիսի 20-ին ապստամբություն սկսվեց Սիսիանի շրջանում, իսկ մայիսի 20—27-ին Զորիսի շրջանում։

Մայիսյան ապստամբության վճռական 20 օրերը (10—30-ը) գրեցին Հայաստանի աշխատավորության հերոսական մարտերի և քաղաքացիական կռիվների առաջին փայլուն էջերը։

Ապստամբությունը պարտվեց։ Դաշնակցական բանդաներին հաջողվեց ժամանակ հաղթել։ Ապստամբության պարտության գլխավոր հանցագործն Արմենկոմի օպորտունիստական ղեկավարությունն էր, որը վճռական ժամին հրաժարվեց ապաստամբության պատասխանատվությունից։

1920 թվի մայիսի 14-ին Երևանից Թանաքեռ տանող խճուղու վրա դաշնակցական մաուզերիստները գիշերով բանտից տարան և գնդակահարեցին Հայաստանի բոլշևիկյան կազմակերպության ակտիվ գործիչներ և ապստամբության ղեկավարներ՝ Ստեփան Ալլահվերդյանին, Բագրատ Ղարիբջանյանին, Սարգիս Մուսայելյանին։ Հա ժողովրդի հարազատ այդ զավակները հաստատ համոզված էին, որ բոլշևիկների ղեկավարությամբ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները կտապալեն դաշնակների տիրապետությունը և Հայաստանում կհաստատեն սովետական կարգեր։

«Ընկերներ,— դիմեց իր ընկերներին իր կյանքի վերջին րոպեին Ալլահվերդյանը,— ես իսկապես համոզվեցի, որ դուք որոշել եք մեռնել մեզ համար։ Հենց միայն այդքանն էլ ինձ բավական է։ Այժմ ես հանգիստ սրտով կարող եմ մեռնելու գնալ, համոզված լինելով, որ հեղափոխության գործը կապրի։ Նա անձնվեր կոմունիստ ընկերների հուսալի ձեռքումն է գտնվում։ Այդ գիտակցությունն ահա ավյուն է ներշնչում ինձ ու թևեր տալիս»։ Եվ դառնալով դեպի դաշնակցական դահիճները, ասաց. «Լավ հիշեցեք, հեղափոխության գործը չի մեռնի։ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները տեր կդառնան իշխանությանը։ Իսկ դուք իմացած եղեք, որ իմ թափվելիք արյան յուրաքանչյուր կաթիլի համար դուք կպատասխանեք ձեր հարյուրավոր համախոհների կյանքերով։ Մի կարծեք, որ չարագործությունը թաքուն կմնա։ Ինձ ճանաչում է Մոսկվան, ինձ ճանաչում է Բաքուն և այն ընկերները, որոնց հետ աշխատել եմ, վրեժխնդիր կլինեն իմ մահվան համար։ Կեցցե՞ Հայաստանի կոմունիստական պարտիան։ Մնաք բարով, ընկերներ»։[1]

[1] ՀԿ(բ)Պ Կենտկոմին կից Պարտարխիվ, ֆ. 30, գ. 4, թ. 89։

Ալլահվերդյանից հետո դուրս եկավ Ս. Մուսայելյանը, որը երկու ձեռքով բաց արավ իր կուրծքը, դեմ արեց արյունախում դաշնակցական դահիճներին և ասաց. «Ես մահից վախեցող չեմ, սպանեցեք ինձ՝ հենց այստեղ, բայց դուք չեք կարող խափանել անխուսափելիորեն այն, որ Հայաստանն ազատ կլինի և մեր գործը չի մեռնի»։[1]

Մուսայելյանից հետո դուրս հկավ աննկուն ռևոլուցիոներ Բաղրատ Ղարիբջանյանը և ասաց. «Հայաստանի հողը մեր արյունով կներկվի և կդառնա կարմիր։ Միք մոռանա իմ՝ խոսքերը, Հայաստանը սովետական կդառնա։ Կեցցե՛ Սովետական Հայաստանը»։[2]

Ռուս մեծ ժողովուրդը և նրա Սովետական կառավարությունն ուշադրությամբ էր հետևում Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին։ Դաշնակցականների նման վարմունքը բոլշևիկների նկատմամբ, հիմք տվեց ՌՍՖՍՌ Արտաքին Գործերի ժողովրդական Կոմիսար Չիչերինին՝ Սովետական կառավարության կողմից խստիվ կերպով բողոքելու և պահանջելու դաշնակցական կառավարությունից՝ դադարեցնելու կոմունիստների ձերբակալությունները և ազատ արձակելու բանտարկվածներին։ Դաշնակցական մարդասպանները խաբելով Սովետական կառավարությանը, փորձում էին ծածկել ոճրագործությունը և խաբել Չիչերինին, հայտնելով, որ «Դաղափարական կոմունիստների (Մուսայելյանի, Ղարիբջանյանի) և Ռևկոմի անդամների կյանքը կառավարությունը խնայել է»։[3]

Խաբելով Սովետական կառավարությանը, դաշնակցական կառավարությունը վրացական մենշևիկյան կառավարությանն ուղարկում է հեռագիր, որտեղ ասված է. «Հայաստանի բոլշևիկների շարժումը ճնշված է վերջնականապես։ Խնդրում ենք Վրաստանի կառավարությանը նրանց բաց չթողնել սահմանից, տերիտորիա ներխուժելու դեպքում ձերբակալել, ուղարկել նրանց Հայաստանի կառավարությանը, որպես պետական հանցագործներ»։[4]

1920 թվի մայիսի 18-ին Վրաստանի կոմունիստական պարտիայի Թիֆլիսի Կոմիտեն հրապարակեց մի դիմում, որով իր բողոքն ու զայրույթն էր հայտնում դաշնակցական կառավարության կողմից կոմունիստների նկատմամբ գործադրված տեռորի քաղաքականության դեմ։ Մայիսի 20-ին Հայաստանի կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն կոչ հրապարակեց՝ ուղղված բանվորներին ու գյուղացիներին, որտեղ ասված էր. «Մենք դիմում ենք Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաներին; նրանց ռևոլուցիոն կորովին և դասակարգային գիտակցությանը, կազմակերպվելու կոմունիստական պարտիայի (բոլշևիկների) դրոշակի շուրջը, հավաքելու ցրված ռևոլուցիոն ուժերը, որպեսզի ձեռք-ձեռքի տված Սովետական Ռուսաստանի պրոլետարիատի հետ, միահամուռ ուժերով խորտակենք միջազգային իմպերիալիզմի հայկական դաշնակցական հատվածի լուծը, նորից բարձրացնենք կոմունիզմի դրոշակը Հայաստանում»։[5]

---

1 ՀԿ(բ)Պ Կենտկոմին կից Պարտարխիվ, ֆ. 30, գ. 4, թ. 89։
2 Նույն տեղում։
3 ՀՍՍՌ Պետարխիվ, ֆ. 200, գ. 323, թ. 85։
4 ՀՍՍՌ Կենտրոնական Պետարխիվ, ֆ. 207, գ. 769, թ. 37։
5 ՀԿ(բ)Պ ԿԿ-ին կից Պարտարխիվ, 1920 թվի կոչերից։

Դաշնակցական կոնտրռևոլուցիոն կառավարության և հայ ժողովրդի ազատության ու անկախության դեմ պայքարող նացիոնալիստական մյուս պարտիաների օրերը հաշված էին։ Մասսաների ռևոլուցիոն ցասումն աճում էր սրագորեն։ Վրա հասան ռևոլուցիոն վերելքի օրերը։ 1920 թվի նոյեմբերին, բոլշևիկների ղեկավարությամբ, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները ոտքի ելան և զենքի ուժով դուրս վռնդեցին դաշնակցական ջարդարարներին՝ Հայաստանից։ «Թող հայտնի լինի համաշխարհային ռևոլուցիայի առաջնորդին,— գրում է Հայաստանի Ռևկոմը Լենինին 1920 թ. նոյեմբերի 30-ին,— որ Դիլիջանի և Քարվանսարայի շրջանների գյուղացիությունը դաշնակցական կառավարության հանցագործ քաղաքականությունից և երկրում խորացող աստիճայից վրդովված՝ ապստամբության դրոշ բարձրացրին... Ոգևորված ապստամբներն առաջ են շարժվում վերջնականապես տապալելու համար Անտանտի գործակալների ատելի տիրապետությունը»։[1]

* * *

1920 թվի աշնանը, երբ հայ ժողովրդի դրությունն անասելի ծանր էր, հենց այդ կրիտիկական օրերին, նրան օգնության հասավ ռուս մեծ ժողովուրդը, հայ ժողովրդի ազատարար ու մեծ բարեկամ ընկեր Ստալինը, որը դեռ 1917 թվի դեկտեմբերին հանճարեղորեն նշում էր, որ հայ ժողովրդի բախտն անխզելիորեն կապված է Հոկտեմբերյան ռևոլուցիայի բախտի հետ։ 1920 թվի նոյեմբերի 9-ին ընկեր Ստալինը Անդրկովկասի բոլշևիկների առջև դրեց հայ ժողովրդի փրկության անհետաձգելի հարցը, նրան անմիջապես օգնության ձեռք մեկնելու հարցը։ Կովկասյան բյուրոյի և Ադրբեջանի բոլշևիկների կոնֆերանսում ընկեր Ստալինն ասաց, որ անհրաժեշտ է օգնության ձեռք մեկնել և փրկել Հայաստանը։

Լենինի և Ստալինի ցուցումներով քաջարի 11-րդ Բանակը՝ Օրջոնիկիձեի և Կիրովի ղեկավարությամբ, օգնության եկավ ապստամբ հայ բանվորներին ու գյուղացիներին։ Նոյեմբերի 29-ին դաշնակների կոնտրռևոլուցիոն իշխանություններ տապալվեց և Հայաստանում հաստատվեց սովետական իշխանությունը։

1920 թվի դեկտեմբերի 1-ին «Կեցցե՞ Սովետական Հայաստանը» իր հոդվածում հայ ժողովրդի ազատարար ու մեծ բարեկամ ընկեր Ստալինը գրում էր.

«Տանջված ու բազմաչարչար, Անտանտի ու դաշնակների ողորմածությամբ սովի, քայքայման ու գաղթի մատնված Հայաստանը,— բոլոր «բարեկամների» կողմից խաբված այդ Հայաստանը այժմ իր փրկությունը գտավ այն բանի մեջ, որ իրեն հայտարարեց Սովետական երկիր։

Ո՛չ Անգլիայի, հայկական շահերի «դարավոր պաշտպանի» կեղծ հավաստիացումները, ո՛չ Վիլսոնի տխրահռչակ տասնևչորս կետերը, ո՛չ Աշգերի Լիգայի մեծադղորդ խոստումները Հայաստանի կառավարման իր «մանդատով»— չկարողացան (և չէին կարող) փրկել Հայաստանը կոտորածից ու ֆիզիկական բնաջնջումից։ Միայն Սովետական իշխանության գաղափարը

[1] Տես—„Жизнь национальностей", № 39, 8 декабря 1920 г. արտատպված է „Образование СССР", сб. документов 1917—1924. под ред. Э. Б. Генкиной, М.—Л. 1949. стр. 158.

Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն...

Թող իմանան բոլորը, ում հարկ է գիտենալ, որ այսպես կոչված հայկական «պրոբլեմը», որի վրա ապարգյուն գլուխ էին ջարդում իմպերիալիստական դիվանագիտության հին գայլերը, կարողացավ լուծել միայն Սովետական իշխանությունը»[1]

Սովետական կարգերի հաղթանակի առաջին իսկ օրը կազմվեց Հայաստանի Ռևկոմը, որը հռչակեց իր դեկլարացիան Սովետական կառավարություն կազմելու մասին։ «Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ,— ասված է դեկլարացիայում,— Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) պարտիան այսօրվանից Հայաստանը հայտարարում է Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա։ Այսօրվանից Սովետական Հայաստանի դրոշակը պաշտպանելու է նրա աշխատավոր ժողովրդին ճնշողների դարավոր լծից»։[2]

1920 թվի նոյեմբերի 30-ին Ռևկոմը դիմեց Լենինին ողջույնով և օգնության խնդրանքով։ ՌՍՖՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի անունից Լենինը ջերմորեն ողջունեց ազատագրված հայ ժողովրդին։ «...Ողջունում եմ իմպերիալիստական ճնշումներից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին»։

Հայաստանում սովետական իշխանության հաստատումը մեծ իրադարձություն էր. «Ես պետք է նշեմ, ընկերներ,— հայտարարեց Լենինը Սովետների համառուսական 8-րդ համագումարում,— որ Արևելքում մեր քաղաքականությունն այս տարվա ընթացքում խոշոր հաջողություն ունեցավ։ Մենք պետք է ողջունենք Բուխարայի, Ադրբեջանի և Հայաստանի Սովետական ռեսպուբլիկաների կազմվելն ու ամրապնդվելը, որոնք վերականգնեցին ոչ միայն իրենց լիակատար անկախությունը, այլև իշխանությունն առան բանվորների և գյուղացիների ձեռքը»։[3]

1920 թվի դեկտեմբերի 1-ին Բաքվի Սովետի հանդիսավոր նիստում Հայաստանի մասին իր արտասանած ճառում Ս. Օրջոնիկիձեն ասում էր.

«Բազմաչարչար հայ ժողովուրդը, Հայաստանի աշխատավորական մասսաները, դաշնակների տիրապետության օրոք շպրտված էր իմպերիալիստական պատերազմի ոլորապտույտում՝ իր բոլոր զարհուրանքներով։ Հայ ժողովուրդն այժմ բարձրացնում է ապստամբության բարձր դրոշը և միանում է մեզ հետ՝ Սովետական կարմիր դրոշի տակ։ Ավելի մեծ հաղթանակ մենք սպասել չէինք կարող»։[4]

Հաշվի առնելով Հայաստանի նյութական ծանր վիճակը, Լենինն ու Ստալինը հայրական հոգատարությամբ կազմակերպեցին նյութական լուրջ օգնություն հայ ժողովրդին։ «Թող Հայաստանի բանվորներն ու գյուղացիները իմանան,— ասում էր Օրջոնիկիձեն 1920 թվի դեկտեմբերին,— որ Սովետական Ռուսաստանի ամբողջ ուժն ու եռանդը տրամադրված է Սովետական Հա-

---

1 Ի. Ստալին, Երկեր, հ. 4, էջ 458—459։

2 Դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ 1-ին, էջ 1-ին, Պետհրատ, Էջմիածին, 1921 թ.։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ 26, էջ 37, Պետհրատ, Երևան, 1931 թ.։

4 Ս. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 91, 1939 թ.։

յաստանին ծառայելու, որ Ռուսաստանի բանվորությունը և Կարմիր Բանակն իրենց հացի խղճուկ պատառը կբաժանեն Հայաստանի բանվորների ու գյուղացիների հետ»։[1]

Չնայած մենշևիկյան Վրաստանի կատաղի դիմադրություններին և արգելքներին, Լենինն ու Ստալինը կազմակերպեցին ոչ միայն պարենային օգնություն, այլև ինքնաթիռի միջոցով դրամական լուրջ օգնություն հասցրին հայ ժողովրդին։

Սովետական իշխանությունն իր գոյության առաջին իսկ օրից ձեռնամուխ եղավ Հայաստանի ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի զարգացման գործին, պատերազմների և դաշնակցական մաուզերիստների կողմից երկրին հասցրած վերքերի արագ բուժմանը։

Սակայն հայ ժողովրդի ոխերիմ թշնամիները՝ դաշնակները, սպեցիֆիկները և նացիոնալիստական կոնտրռևոլյուցիոն մյուս թափթփուկները, հույս դնելով Անտանտի իմպերիալիստների և նրանց դաշնակից Թյուրքիայի օգնության վրա և օգտվելով Հայաստանի տնտեսական ծանր դրությունից, Ռևկոմի գլուխ կանգնած Կասյանի և նրա նմանների օպորտունիստական բարեհոգությունից, 1921 թվի փետրվարին կազմակերպեցին ավանտյուրա, որը տապալված հին կարգերի վերականգնման փորձ էր։ Ավանտյուրայի հետևանքով ստեղծված, այսպես կոչված «Հայաստանի Փրկության Կոմիտեն», որի նախագահն էր բանգիտ Վրացյանը, դիմեց Թյուրքիային և նրա արևելյան ռազմաճակատի հրամանատար Քեզիմ Կարաբեքիր փաշային՝ օգնության գալու և բոլշևիկների դեմ միատեղ պայքարելու համար։

Դաշնակցական բանդաները սկսեցին հանդես գալ Թյուրքիայի կողմից հայերի մասսայական ոչնչացման, նրա ասիմիլացման ռեակցիոն քաղաքականության պաշտպանության ու օրինականացման դերում։ Նրանք փորձում էին թուրքական վանդալների սարսափելի արարքների հանցանքը բարդել հայ ժողովրդի վզին, այնպես, ինչպես այդ անում են թուրքական ռեակցիոներները ներկայումս։

Բայց իզուր անցան դաշնակների և հայ նացիոնալիստական մյուս պարտիաների փորձերը։ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները՝ բոլշևիկների ղեկավարությամբ, իրենց միտինգներում և ընդունած բանաձևերում անարգանքի սյունին էին գամում դաշնակների տեռորիստական քաղաքականությունը։ Ջարխեչ գյուղի աշխատավորների ընդունած բանաձևը վերջանում էր հետևյալ խոսքերով. «Մինչև վերջնական հաղթանակը կռվել խմբապետների ու մաուզերիստների դեմ»։[2] Ռազմառևոլյուցիոն կոմիտեները բոլշևիկ Աթարբեկյանի գլխավորությամբ՝ ղեկավարում էին ժողովրդի պայքարն ընդդեմ կոնտրռևոլյուցիայի։ Հայ ժողովրդին նորից օգնության հասավ քաջարի 11-րդ բանակը։ Կոնտրռևոլյուցիայի դեմ մղվող համառ մարտերի միջոցով 1921 թվի ապրիլի 2-ին Կարմիր Բանակի զորամասերը աշխատավորների հետ միասին ազատագրեցին Երևանը, 3-ին՝ Վաղարշապատը։ 1921 թվի հունիսի 26-ին Կարմիր Բանակն արշավեց դեպի Զանգեզուր՝ դաշնակցական բանդաների լիկվիդացման նպատակով։ 1921 թվի հուլիսի 13-ին ամբողջ Զանգեզուրի վրա ծածանվեց Սովետական կարմիր դրոշը։ Կործանվեց Նժդեհի ղեկավարած «Լեռ-

---

[1] «Կոմունիստ», № 1, 1920 թ. դեկտեմբերի 9, Երևան։
[2] «Կարմիր աստղ», № 11, 1921 թ., մարտի 11։

նային կառավարություններ» և դրանով լիկվիդացվեց դաշնակցական ավանտյուրան։

* * *

Հայ ժողովուրդն իր վրայից վերջնականապես թոթափելով դաշնակցական բանդաների լուծը, ձեռնամուխ եղավ կործանման եզրին հասած երկրի տնտեսական ու կուլտուրական շինարարության ստեղծագործ աշխատանքին։

Լենինի-Ստալինի պարտիայի ազգային իմաստուն քաղաքականության անշեղ կենսագործման շնորհիվ, ռուս մեծ ժողովրդի օգնությամբ ու աջակցությամբ, սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում, Հայաստանի բանվորները, գյուղացիները և ինտելիգենցիան, սովետական կարգերի պայմաններում կարողացան արմատապես փոխել Հայաստանի դրությունը։ Սովետական իշխանության տարիներին վիթխարի չափերով աճեցին Հայաստանի արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, էլեկտրիֆիկացիան։

Արդյունաբերության և սոցիալիստական գյուղատնտեսության հարաճուն վերելքին զուգընթաց բարձրացել է նաև ժողովրդի կյանքի նյութական ու կուլտուրական մակարդակը, լայն հնարավորություններ են ստեղծվել կուլտուրայի, արվեստի, գրականության, գիտության, ժողովրդական կրթության և առողջապահության զարգացման համար, քաղաքների և գյուղերի արմատական բարեկարգման համար։

Սովետական Հայաստանում անցած 30 տարիների ընթացքում տեղի ունեցավ իսկական կուլտուրական ռևոլուցիա. կիսախավար, անգրագիտության երկրից մեր ռեսպուբլիկան վերածվեց համատարած գրագիտության երկրի։

А. Варданян

Великая Октябрьская социалистическая революция—освободительница армянского народа

Резюме

Октябрьская революция освободила все угнетенные национальности и народы бывшей царской России и разбила цепи национального гнета. «Теперь ясно для всех, что судьбы народов России, особенно судьбы армянского народа, тесно связаны с судьбами Октябрьской революции»— писал товарищ Сталин. (И. В. Сталин—соч., т. 4, стр. 26).

Губительная политика контрреволюционеров-дашнаков, агентов англо-французских и американских империалистов, привела страну к анархии и нищете, к физическому уничтожению армянского народа и его культуры. В период своего кровавого господства (1918—1920 гг.) дашнакские маузеристы, злейшие враги армянского народа, разжигали национальные войны между братскими народами Закавказья, чтобы отклонить внимание рабочих и крестьян от растущей революции. Являясь злейшими врагами Октябрьской революции, дашнаки защищали ориентацию империалистов Англии, Франции, Америки, ожидая от них разрешения армянской проблемы.

Рабочие и крестьяне Армении, вдохновляясь победой Октябрьской

революции, при активной поддержке великого русского народа и народов Закавказья и под руководством партии большевиков, поднялись на борьбу против дашнаков и империалистов Антанты во имя установления советской власти в Армении. Под руководством отважных сынов армянского народа Алавердяна, Гарибджаняна, Гукасяна, Мусаеляна, Саруханяна и др., армянский народ в мае 1920 г. поднял знамя вооруженного восстания против дашнаков. Это была первая попытка установления советской власти в Армении. Но восстание потерпело поражение. Дашнакам удалось еще несколько месяцев удержать власть.

Освободитель и великий друг армянского народа товарищ Сталин поставил неотложную задачу—во что бы то ни стало оказать помощь армянскому народу, спасти Армению.

29 ноября 1920 года армянский народ под руководством большевиков, при помощи русского народа и его героической 11 Красной Армии изгнал дашнаков и установил советскую власть в Армении. «Пусть знают все, кому ведать надлежит,—писал товарищ Сталин—что так называемую армянскую «проблему», над которой тщетно ломали голову старые волки империалистической дипломатии, оказалась в силах разрешить только Советская власть.

«Да здравствует Советская Армения» (И. Сталин,—там же, стр. 414).

Тридцать лет советской власти показали, что трудящиеся массы Армении, освобожденные от гнета и эксплоатации, способны совершать великие исторические дела, создавать огромные материальные и духовные ценности. Армянский народ, возглавляемый великой партией Ленина—Сталина, в кратчайший срок построил социализм, создал могучую передовую промышленность, превратил сельское хозяйство Армении в крупное коллективное социалистическое хозяйство. В годы советской власти небывало развилась национальная по форме и социалистическая по содержанию культура Армении.